

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2016

10-րդ դասարան

Ա. Աշխատանք բնագրով: (12 միավոր)

Հողմահալած ձյան փաթիլների նման մարտի էին սլանում հույները: Արևի տակ շողշողում էին նրանց սաղավարտները, նիզակներն ու վահանները: Աքիլլեսը կառք բարձրացավ և ձգելով նժույգների երասանները՝ դիմեց նրանց .

–Քսանթո՛ւ ու Բալիո՛ւ, կենդանի դու՛րս բերեք ինձ մարտի դաշտից:

Այսպես խոսեց Աքիլլեսը և ի մարտ վարեց նժույգներին: Հույներն արդեն շարվել էին դաշտում և պատրաստվում էին գրոհել տրոյացիների վրա: Դեմ դիմաց էլան էնեասն ու Աքիլլեսը: Էնեասը իր վահանը նետեց դեպի Աքիլլեսը, բայց չխոցեց : Աքիլլեսը ընդոստ հարձակվեց տրոյական այլ հերոսների վրա, և շատերն ընկան նրա կորստաբեր նետերի շեղջից : Կատաղի հրդեհի նման մոլեգնում էր նա տրոյացիների շարքերում: Աքիլլեսն այրվում էր ռազմական փառքի ծարավից: Նա երկու սայրերով թուրը մխրձեց Լիքսանի պարանոցը և տապալեց գետնին:

1. Բացատրե՛ք սաղավարտ, վահան, երասան բառերի իմաստները:
2. Նշե՛ք նժույգ, զամբիկ, հովատակ, աշխետ հոմանիշ բառերի նրբիմաստները:
3. Նշե՛ք Հունաստանի հին անվանումը և նրա արմատով կազմե՛ք երեք բառ:
4. Որո՞նք են կույտ, շեղք, գիրթ բառերի հոմանիշները տեքստում:
5. Գրե՛ք Աքիլլես բառով կազմված թևավոր խոսքը, բացատրե՛ք իմաստը և ծագումը :
6. Գլուխ և արև բառերով գրե՛ք մեկական դարձվածք՝ նշելով նրանց հականիշ դարձվածքները:
7. Ուղղակի խոսքը հարստացրե՛ք զգացական և դատողական վերաբերմունք արտահայտող մեկական բառով:
8. Ուղղակի խոսքը վերածե՛ք բայական անդեմ նախադասության :

Բ. Բացատրե՛ք <<Կա՛մ վահանով,կա՛մ վահանին >> թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է առաջացել: (3 միավոր)

Գ. Շարադրություն՝ « Սրտի թելադրանքով» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ մ.գ.թ., դոցենտ

Գ. Խալաթյան